Շապուհ Բագրատունու խօսքերն են Վարդանի մօտ (էջ 77)։

Այս կայսրը Լեւոն Հայկազն է (813–820)։ Սրանից է ստացել հետեւապէս Աշոտը կիւրապաղատութեան պատիւը եւ առիթ ունեցանք արդէն յիշելու, որ երբ Ջահապ արաբ իշխանը դրաւեց Դուինը, Աշոտ Մսակերի ժամանակ, Աշոտ Կիւրապաղատը դիմեց Լեւոն կայսրին եւ խնդրեց օգնել նրան ազատելու Դուինը։ Բայց Լեւոնի վերահաս մահը Միքայէլի ձեռքով Աշոտի խնդիրը անկատար թողեց։ Պէտք է կարծել, որ Աշոտ Կիւրապաղատը իշխան ճանաչուեց արաբների կողմից Աշոտ Մսակերի հետ միաժամանակ։ Կարճ միջոցում խորհուն զործունէութեամբ կարողացաւ «տիրել ի Կղարջաց մինչեւ ի Տփղիս լեռնակողմամբ հանդերձ» (Շապուհ առ Վարդան, էջ 78)։

Տարեգիրքը համաձայն է այս կէտում, երբ վկայում է որ Աշոտը նուաճեց Կղարջեթից մինչեւ Քսան գետը։ Նուաճումը, ըստ Տարեգրքի, հետեւանք էր այն յաղթութեան, որ Աշոտը տարաւ Թիֆլիսի արաբ ամիրայի վրայ։

Արդարեւ այդ ժամանակները Թիֆլիսը գտնւում էր Մուհամմատ իբն Հատաբ արաբ ամիրայի ձեռքին։ Հիւսիսից Աշոտ Կիւրապաղատին հարեւան էր Ափխազաց թագաւորութիւնը։ Ափխազները օգտուելով Բիւզանդիայի եւ խազարների մրցութիւնից յաջողել էին արդէն հիմնել նոր իշխանական հարստութիւն եւ բաւականին ընդարձակել իրենց տէրութեան սահմանները, որոնց մէջ մտնում էին ոչ միայն բուն Ափխազիան, այլ եւ Մինգրելիան եւ Գուրիան գրեթէ ամբողջ Ծովափեայ աղեղը։

Աշոտի կողմից պարզ հաշիւ էր բարեկամական յարաբերութիւն ստեղծել այս հարեւանի հետ, որ հակառակ դէպքում կարող էր ահաւոր լինել։ Աշոտ Կիւրապաղատը բարի համարեց Ափխազաց Թեւդաս թագաւորին փեսայացնել իր դստեր։ Այս կերպ կարողացաւ իրեն զինակից անել Թեւդասին եւ միասին դէմ դնել Թիֆլիսի ամիրային։

Տարեգիրքը հաւատացնում է, որ Կիւրապաղատը քսան գետի մօտ ճակատեց ամիրային, որի օգնական էր Կախեթի իշխանը, եւ յաղթեց։ Շուտով Աշոտի վրայ եկաւ Խալիլ՝ Եզիդի որդին եւ Աշոտ փախաւ իր ընտանիքով դէպի Ցունաստան։ Ջաւախքի լեռներում, Փարուան լճի ափին հանգստանում էր, երբ յարձակուեցին նրա վրայ արաբները, բայց Աշոտ յետ մղեց նրանց եւ գնաց Կղարջք եւ հաստատուեց Արտանուշ։ Վերանորոգեց հին աւերբերդը, շինեց Պետրոս եւ Պօղոս առաքելոց անունով մի եկեղեցի, ջանաց երկիրը շէնցնել, աւերակները նորոգել, նոր գիւղեր շինել եւ խմբել բնակչութիւնը, որ տակաւին Մրուանի գործած աւերածութեան ծանր հետեւանքների տակ էր գտնւում։ Քիչ յետոյ նենգութեամբ սպանուեց 826 թուին, Ցունուարի 29-ին։

Այս պատմութեան մէջ ճշմարտութիւնն այն է, որ Աշոտ Կիւրապաղատը Ջաւախքից հետզհետէ յառաջ է գնացել եւ հաստատուել Արտանուշում, եւ չի կարողացել շարժուել դէպի բուն Վրաստան, դիմադրութեան հանդիպելով Թիֆլիսի ամիրայի եւ Կախեթի իշխանների կողմից։ Խալիլ, որդի Եզիդի, սխալ ընթերցումն է, փոխանակ Խալիդի (վրացերէն Լ եւ Դ տառերը շփոթելի են), որ մեզ յայտնի Շայբանի իշխան է, կուսակալ Հայաստանի 827—832 տարիները։ Որովհետեւ Աշոտ Կիւրապաղատի մահը Տարեգիրքը դնում է 826 թուին, ուստի սխալ է գործում Խալիդ Շայբանի կուսակալին Աշոտի դէմ հանելով։ Տարեգրքի օրինակներից մէկում չի յիշւում այստեղ Խալիդը յանուանէ։ Հաւանական է որ եւ այս ընդհարումը նոյն Մուհամմատ իբն Ատաբի հետ է եղած։ Կամ պէտք է ընդունել, որ Աշոտի մահուան տարին սխալ է, ինչպէս Մարկուարտն է ընդունում, որ քիչ հաւանական է։

Խալիդը ընկճեց Թիֆլիսի ամիրային եւ նրա տեղ նշանակեց Ալի՝ որդի Շուարի, ինչպէս վկայում են Տարեգիրքը եւ արաբ աղբիւրները։ Ալի եղբայր էր Իսմայիլի որ Ատաբից յառաջ նոյն քաղաքի տէրն էր։ Ալիից յետոյ յաջորդեց Իսմայէլի որդի Իսահակը։

Կիւրապաղատի որդիները մանկահասակ էին երբ ինքը մեռաւ։ Երէց որդին կոչւում էր Ատներսեհ (վրացերէն Ադարնասէ), կրտսերը՝ Բագրատ։ Իշխանութեան գլուխն անցաւ Բագրատ։ Ինչ վիճակի մէջ էր Արտանուջի մանուկ իշխանութիւնը Կիւրապաղատի որդիների անչափահասութեան ժամանակ, անորոշ է։ Գիտենք, որ Խալիդ Շէյբանի այնուհետեւ վե-